

ՀԱՄԱԶԳ-ԱՅԻՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՇԱԲԱԹ

Ս/թ. հոկտեմբերի 1-ին Երևանի Ազատության հրապարակում մեկնարկեց համազգային Գիտության շաբաթը, որի նպատակն էր մոտեցնել գիտությունը հասարակությանը:

Գիտության շաբաթը կազմակերպել էին «Գիտուժ» նախաձեռնությունը և Գիտությունների ազգային ակադեմիան՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ:



Հայաստանում առաջին անգամ անցկացվող այս միջոցառմանը միացան Հանրապետության գիտական և տեխնոլոգիական կառույցները: Ազատության հրապարակում տեղադրվեցին Գիտությունների ազգային ակադեմիայի ինստիտուտների ու կենտրոնների տաղավարները, որտեղ գիտաշխատողները ներկայացրին իրենց գիտական ուղղություններն ու արդյունքները, իրականացրին հետաքրքիր գիտափորձեր և անցկացրին քննարկումներ երեխաների, դպրոցականների և գիտությանը հետաքրքրվողների հետ: Գիտության շաբաթվա մեկնարկին տաղավարներով շրջեցին Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սադյանը, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը, Բարձրագույն կրթության

և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանը, Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական համաձայնողի նախագահ Սիսակ Գաբրիելյանը:

«Հոկտեմբերի 1-6-ը Ազատության հրապարակը շնչում էր գիտությամբ: Գիտության շաբաթը միջազգային ընդունված ձևաչափ է, գիտության հանրայնացման հարթակ, որտեղ առաջին հերթին հնարավորություն ունենք երեխաներին ծանոթացնելու գիտությանը: Սա իրենց համար և՛ մասնագիտական կողմնորոշման հարթակ է, և՛ տեսանելի է դարձնում գիտության ձեռքբերումներն ու զարգացումները: Մեծ աշխատանք է արված, և յուրաքանչյուր կառույց փորձել է երեխաներին հետաքրքրել որոշակի գիտակարգով, որոշակի ուղղությամբ: Անկախ նրանից, թե ինչ բարդ թեմաների է անդրադառնում հետազոտությունը, մեր գիտաշխատողները գտել են այդ մասին երեխաների հետ հասկանալի և մատչելի խոսելու ձևը և լեզուն: Սա շատ կարևոր է, որովհետև իրականում մենք կարող ենք երեխաներին բերել դեպի գիտություն, եթե կարողանանք ցույց տալ գիտության, հետազոտության ուղիղ կապը կյանքի հետ: Այս տաղավարները հնարավորություն են տալիս բացահայտելու այդ կապը և ցույց տալու յուրաքանչյուր աշխատանքի ուղիղ ազդեցությունը մեր կյանքի և մեր կյանքի որակի վրա», - ասաց Ժաննա Անդրեասյանը:

«Գիտուժ» նախաձեռնության աշխատանքները համակարգող Լիլիթ Մարգարյանը պատմեց՝ ինչպես առաջացավ Գիտության շաբաթվա գաղափարը: «Մոտ 4 տարի առաջ «Գիտուժը» սկսեց իր գործունեությունը երկու ուղղությամբ՝ գիտության քաղաքականության մշակում և գիտության հանրահռչակում: Այս ընթացքում մենք տեսանք ակտիվություն մեդիադաշտում՝ լուսաբանելու գիտությունը, և հասկացանք, որ եթե ուզում ենք՝ երկարաժամկետ մտածենք և գիտության հանրահռչակումն ավելի ինստիտուցիոնալ մակարդակով անենք, պետք է խոսենք հասարակության բոլոր շերտերի հետ: Սկսեցինք

ուսումնասիրել միջազգային փորձը, որը ցույց տվեց, որ տարբեր երկրներում ամեն տարի անցկացնում են գիտության շաբաթներ՝ թեման փոխելով: Ընտրեցինք «Մոտեցնելով գիտությունը հասարակությանը» թեման, որի նպատակն է, որ հասարակությունը հասկանա թե՛ գիտության, թե՛ գիտականի աշխատանքի կարևորությունը», - ասաց Լիլիթ Մարգարյանը:

Գիտության շաբաթվա բովանդակության պատաս-



խանատու Արման Գասպարյանը նշեց, որ կենտրոնական թիրախը երեխաներն ու երիտասարդներն են: «Գիտության շաբաթը բոլորի համար է: Նպատակ ունենք փոխելու հասարակության վերաբերմունքը գիտության նկատմամբ, որպեսզի ավելի քննադատական մտածելակերպ առաջանա, ձևավորվեն հասարակական կարծիք և պահանջ պետության նկատմամբ գիտության ֆինանսավորման առումով, և Գիտության շաբաթը վերածվի ամենամյա ինստիտուցիոնալ հարթակի», - ասաց Արման Գասպարյանը:

Գիտության շաբաթը շարունակվեց մինչև հոկտեմբերի 6-ը ներառյալ:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին



ՀՀ ԳԱԱ պատվիրակությունը մասնակցել է Գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիայի (MAAH) 37-րդ նիստին

Վերջերս Մոսկվայում տեղի ունեցավ Գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիայի (MAAH) 37-րդ նիստը, որը միավորում է 27 երկրների ակադեմիաներ և գիտական կառույցներ: Այն նվիրված էր Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի 300-ամյակին:

Նիստին մասնակցեցին ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սադյանը, ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ռուբեն Հարությունյանը և Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) անդամ-երկրների հարցով ՀՀ ԳԱԱ փորձագետ Գևորգ Վարդանյանը:

Ռուբեն Հարությունյանը՝ որպես MAAH -ի ազգային բնական ժառանգության գիտական խորհրդի համանախագահ, ներկայացրեց «Ազգային բնական ժառանգության հայեցակարգը կլիմայի փոփոխության համատեքստում» զեկույցը MAAH -ի ազգային բնական արժեքի գիտական խորհրդի նիստին: Գևորգ Վարդանյանը մասնակցեց MAAH-ի երիտասարդ գիտնականների խորհրդի նիստին՝ որպես խորհրդի համանախագահ: Հանդիպումների ընթացքում քննարկվեցին ընթացիկ աշխատանքների հաշվետվությունները և հետագա համագործակցության ծրագրերը: Շեշտվեց միջազգային համագործակցության կարևորությունը գիտության ոլորտում:

MAAH-ն ունի 32 իսկական անդամ: Հայաստանից MAAH իսկական անդամներ են ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը (ընտրվել է 2019 թ.) և ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սադյանը (ընտրվել է 2021 թ.): ՀՀ ԳԱԱ-ն MAAH անդամ է ասոցիացիայի հիմնադրման՝ 1993 թվականից:

MAAH հաջորդ հանդիպումը կանցկացվի 2025 թվականին Մինսկում:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՀՀ ԳԱԱ-ի և Չինաստանի «CORE» ակադեմիայի միջև ստորագրվեց համագործակցության հուշագիր

Ս/թ. հոկտեմբերի 11-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան հյուրընկալեց Չինաստանի ժողովրդական Հանրապետության «CORE» ակադեմիայի պատվիրակությանը՝ պրոֆեսորներ Լի Լեիին, Ռեյնոլդ Ջ. Վուլֆին, Թիլին Ֆենգ Լիուին և Թիլին Յան Ժենգին: ՀՀ ԳԱԱ-ի կողմից հանդիպմանը ներկա էին ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, թղթակից անդամ Հրանտ Մաթևոսյանը, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար, թղթակից անդամ Արթուր Իշխանյանը և ՀՀ ԳԱԱ նախագահի գիտության և տեխնոլոգիաների գծով տեղակալ Վարդան Սահակյանը:

Կողմերը ծանոթացան միմյանց գիտական գործունեությանը, քննարկեցին համագործակցության ուղիները: Այնուհետև ՀՀ ԳԱԱ-ի և «CORE» ակադեմիայի միջև ստորագրվեց համագործակցության հուշագիր: ՀՀ ԳԱԱ-ի կողմից հուշագիրը ստորագրեց ՀՀ ԳԱԱ փոխնախագահ Հրանտ Մաթևոսյանը, իսկ «CORE» ակադեմիայի կողմից՝ Ռեյնոլդ Ջ. Վուլֆը:

Հուշագրի նպատակն է.

- նպաստել համատեղ նախագծերին կրթական, գիտական, տեխնոլոգիական և մշակութային ոլորտներում,
- իրականացնել համատեղ գիտական հետազոտություններ, գիտնականների փոխանակման ծրագրեր,
- կազմակերպել համատեղ/փոխա-



դարձ գիտատեխնիկական շրջայցեր, ինչպես նաև գիտական հանդիպումներ, համատեղ լաբորատորիաներ կամ ինստիտուտներ,

● իրականացնել գիտության հանրահռչակման գործունեություն երկու կազմակերպությունների համար և խթանել համապարփակ համագործակցությունը երկու կազմակերպությունների հաղորդակցության, հետազոտությունների և միջազգային զարգացման գործում:

«CORE» ակադեմիան ներկայացնում է «International Core Academy of Sciences and Humanities» ակադեմիան և նրա կից հաստատությունները (ներառյալ «Ke Rui» ակադեմիան, «CORE» գիտական կենտրոնները և «CORE» հետազոտական լաբորատորիաները):

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ԸՇ կառավարությանը ներկայացվել են բույսերի գենետիկական ռեսուրսների պահպանության հրատապ խնդիրների վերաբերյալ առաջարկություններ

ՀՀ ԳԱԱ կենսաբազմազանության և կենսաանվտանգության պրոբլեմային խորհուրդը ՀՀ կառավարությանը է ներկայացրել առաջարկություններ բույսերի գենետիկական ռեսուրսների պահպանության հրատապ խնդիրների վերաբերյալ:

Օրենսդրական առաջարկությունների փաթեթը մշակել է աշխատանքային խումբը, որը ստեղծվել էր ՀՀ ԳԱԱ կենսաբազմազանության և կենսաանվտանգության պրոբլեմային խորհրդի որոշմամբ ս/թ. օգոստոսի 28-ի նիստի ժամանակ:

Ներկայացվել են հետևյալ առաջարկությունները.

1. ՀՀ բուսական աշխարհի սեփական ռեսուրսների նկատմամբ ինքնիշխան իրավունքը, այն է՝ գենետիկական ռեսուրսների պահպանման, կայուն օգտագործման և մատչելիության հետ կապված հարցերն անհրաժեշտ է կարգավորել ներազգային օրենսդրությամբ:

2. Հարկ է հստակ տարանջատել ինչպես գենետիկական ռեսուրսների սեփականության և փաստացի տիրապետման ռեժիմները, այնպես էլ սեփականության կամ փաստացի տիրապետման իրավունքների սուբյեկտները:

3. Գենետիկական ռեսուրսների մատչելիությունը, տարբեր պետությունների հետ դրանց փոխանցման պարագայում հետազոտելիության կառավարումը, դրանց օգտագործումից ստացված օգուտների արդար և հավասար հիմունքներով համատեղ օգտագործումը պետք է իրականացվեն համաձայն ներպետա-

կան օրենսդրության, կառավարելի ռիսկերով և առաջնորդվելով երկրի ազգային շահով:


4. Գենետիկական ռեսուրսների հավաքն անկախ նպատակից՝ առևտրային, գիտահետազոտական և այլն, չպետք է վտանգի բնական բուսական համակենցությունների ամբողջականությունը:

5. Հավաքող կողմը պետք է ունենա գրավոր համաձայնություն, որը կսահմանի տվյալ գենետիկական ռեսուրսների ծագման երկրի գործադիր մարմնի նախապես հիմնավորված համաձայնությունը, գենետիկական ռեսուրսների հավաքման տարածքը, հավաքելու արդյունքում ակնկալվող օգուտների ձևերը և չափերը, տվյալ գենետիկական ռեսուրսների հավաքի ժամկետները, նպատակները:

6. Հավաքող կողմը պետք է ունենա գրավոր համաձայնություն, թե ինչ պայմաններով կարող է ձեռք բերված գենետիկական նյութը տարհանել կամ փոխանցել այլ կողմի:

7. Նախապես կնքված պայմանագրի և նախատեսված պայմանների չկատարման կամ խախտման դեպքերում կիրառել տուգանքներ, դիտարկել պայմանագրերի վաղաժամկետ դադարեցման և այլ պատժամիջոցներ կիրառելու հնարավորություններ, մշակել պայմանագրից ծագած վեճերի արդյունավետ լուծման մեխանիզմներ:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին



ԸՇ ԳԱԱ Արմեն Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտը դարձել է Բնության պահպանության միջազգային միության անդամ

ՀՀ ԳԱԱ Արմեն Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտը՝ որպես Հայաստանի առաջին գիտական հաստատություն, դարձել է Բնության պահպանության միջազգային միության (IUCN) անդամ: Անդամակցության համար հիմք է դարձել ինստիտուտի կողմից բազմապիսի ազգային ու միջազգային նշանակության կենսաբազմազանության և վայրի բնության պահպանության ուղղված ծրագրերի իրականացումը:

Ինստիտուտի միջազգային կապերի և համագործակցության համակարգող Ալլա Ալեքսանյանը մշեց՝ IUCN-ի լայնածավալ աշխատանքը քաղաքականության մշակման, հետազոտության և բնապահպանական հիմնախնդիրների հանրայնացման ոլորտում լիովին համահունչ է ինստիտուտի առաքելությանը և տեսլա-

մարտահրավերները»,- ասաց Ալլա Ալեքսանյանը:

1948 թվականին ստեղծված IUCN-ն այժմ աշխարհի ամենամեծ բնապահպանական ցանցն է, որը միավորում է ավելի քան 160 երկրի 1400 պետական և ոչ պետական կազմակերպություններ: Նպատակն է աջակցել՝ պահպանելու բնության ամբողջականությունն ու բազմազանությունը, ապահովելու բնական պաշարների բանական և էկոլոգիապես կայուն օգտագործումը: IUCN-ը գլխավորում է Միջազգային Կարմիր և Կանաչ գրքերի կազմման ու հրատարակման աշխատանքները, ունի դիտորդի կարգավիճակ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ԸՇ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի նոր մշակումները



ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում մշակվել է Հոնգ-Օու-Մանդելի (ՀՕՄ) ինտերֆերենցի իրականացման նոր մեխանիզմ տարբեր ալիքի երկարության երկու անկախ ֆոտոնների համար: Այն հիմնված է պարամետրիկ փոխազդեցության վրա: Մեխանիզմը հնարավորություն է տալիս վերահսկելի տեղափոխելու կողմավորված քվանտային տեղեկությունը հիբրիդային ցանցով, ինչպիսին է քվանտային համացանցը, որտեղ տարբեր նյութական հանգույցները գործում են տարբեր ռեզոնանսային հաճախություններով՝ ապահովելով պաշտպանվածությունը դեկոհերենտությունից: ՀՕՄ երևույթն անկախ է ֆոտոնների բևեռացումից, ինչի շնորհիվ առաջարկվող մոդելը ճկուն է հիբրիդային քվանտային ցանցերում օգտագործելու համար: Աշխատանքի գիտական ղեկավարն է ինստիտուտի «Տեսական ֆիզիկայի» լաբորատորիայի առաջատար գիտաշխատող, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Յուրի Մալաքյանը:

«Մշակված մոդելը կարող է ծառայել որպես անհրաժեշտ շինանյութ ապագա քվանտային ցանցերի ստեղծման համար, որոնք հիմնված են քվանտային հիշողության տարատեսակ կառուցվածքների վրա: Այս կառույցները միավորում են տարբեր ռեզոնանսային հաճախականություններով աշխատող նյութական միավորները մեկ հիբրիդային ցանցի մեջ»,- ասաց Յուրի Մալաքյանը:

Աշխատանքն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի աջակցությամբ՝ 20TTAT-QTc004 հետազոտական ծրագրի շրջանակներում:

Ըստ Յուրի Մալաքյանի՝ գիտական աշխատանքը լայն արձագանք է գտել միջազգային գիտական հանրության կողմից, հիմնականում քվանտային տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում:

ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտում մշակվել և իրականացվել է միկրոմասնիկների գերման սարքերի (թվիզերների) նոր նախատիպ օպտիկական հոլոգրաֆիայի ու չդիֆրակտվող բեռնային փնջերի եղանակների հիման վրա: Այն նախատեսված է ֆոտոռեֆրակտիվ բյուրեղի մակերևույթին լազերային փնջով մակածված, ամիսներ պահպանվող ֆոտովոլտային դաշտերի միջոցով միկրո- և մանոմասնիկների ղեկավարվող տեղաշարժման ու գերման համար:

Միկրո- և մանոմասնիկների ղեկավարվող տեղաշարժման մեթոդների մշակումը կարևոր նշանակություն ունի գիտության տարբեր ոլորտներում՝ ինտեգրալ օպտիկայից և ֆոտոնային սարքերից մինչև մանոէլեկտրոնիկա և կենսատեխնոլոգիա: Վերջին տասնամյակում զգալի զարգացում են ստացել լազերային տեխ-

նիկայի աջակցությամբ միկրո- և մանոմասնիկների իրականացվող գերման և տեղաշարժման մեթոդները:

«Մեր լաբորատորիայում մշակվել է միկրոմասնիկների գերման սարքերի (լավիտների (tweezers) նոր եղանակ: Ֆոտոռեֆրակտիվ բյուրեղի մակերևույթին հատուկ դասի օպտիկական բեռնային փնջով մակածվում են պարբերական բաշխվածությամբ ֆոտովոլտային (ՖՎ) էլեկտրական դաշտեր, որոնք կարող են ազդել բյուրեղի մակերևույթի մոտակայքում գտնվող միկրո- և մանոմասնիկների վրա: Մշակված լավիտների յուրահատկությունն է բյուրեղի մակերևույթին ձևավորված դաշտերի երկարակենցությունը՝ մինչև մեկ տարի: Սա հանգեցնում է ինքնավար ռեժիմում գործող «lab-on-a-chip» սարքի: Այս կոնցեպտը հաստատվել է դիէլեկտրիկ և մետաղական միկրո- և մանոմասնիկների ղեկավարվող տեղաշարժման և գերման համար: Վերջերս մշակված լավիտները կիրառվել են նաև կենսաբանական օբյեկտների վրա, մասնավորապես ԴՆԹ-ի մոլեկուլների գերման համար: ԴՆԹ-ի դիտարկումն իրականացվել է բևեռացումային մանրադիտակի միջոցով: Այս մոտեցումը ոչ ինվազիվ մանրադիտակային տեխնիկայի ինովացիոն եղանակ է՝ հիմնված ֆոտովոլտային լավիտների վրա՝ կենսաբանական օբյեկտների դիտարկման և չափազանց համար»,- ասաց ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի «Ոչ գծային բյուրեղների և ֆոտոնիկայի» լաբորատորիայի վարիչ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Ռաֆայել Դրամփյանը:

Հետազոտությունները սկսվել են Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի դրամաշնորհի շրջանակներում՝ ISTC Project A-2130 «Control of light in structured nonlinear media: Application to all-optical devices», 2016-2019: Այնուհետև շարունակվել են ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հե-



տազոտությունների ինստիտուտի բազային ֆինանսավորման ծրագրի շրջանակում:

«Աշխատանքը հետաքրքրություն է առաջացրել Կանադայի Քվեբեկ նահանգի Լավալի համալսարանում: ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի և Լավալի համալսարանի միջև ստորագրվել է համագործակցության պայմանագիր՝ համատեղ հետազոտություններ իրականացնելու համար»,- ասաց Ռաֆայել Դրամփյանը:

Հետազոտության արդյունքները տպագրվել են միջազգային գիտական հանդեսներում:

Հետազոտության արդյունքները մասամբ ներառվել են ինստիտուտի գիտաշխատող Լուսինե Ծառուկյանի թեկնածուականատեսության մեջ:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ԿՈՄԻՏԱՍ - 155



Օրերս ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունը լույս է ընծայել Կոմիտասի երկերի ժողովածուի երկրորդ հրատարակության առաջին հատորը, որն ընդգրկում է Կոմիտասի մեներգերը՝ դաշնամուրի նվագակցությամբ:

Իսկ ամեն ինչ սկսվել էր տասնամյակներ առաջ: 1949 թվականի սեպտեմբերի 26-ին՝ Կոմիտասի ծննդյան 80-ամյակի օրը, Հայկական խՍՀ Մինիստրների խորհուրդը որոշում ընդունեց Կոմիտասի երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակության մասին, որի իրագործումը հանձնարարվեց ՀԽՍՀ գիտությունների ակադեմիային: Ակադեմիայի նախագահությունը 1950թ. հունվարի 25-ի N 4 նիստում որոշում կայացրեց Կոմիտասի երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակությունը 1950-ին սկսելու վերաբերյալ: Խմբագրական հանձնախմբում ընդգրկվեցին Ռոբերտ Աթայանը, Մուշեղ Աղայանը, Սամսոն Գասպարյանը, Քրիստափոր Քուշնարյանը և Մաթևոս Մուրադյանը:

Հետագա տասնամյակների ընթացքում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտագետների մի քանի սերունդների, մասնավորապես Ռոբերտ Աթայանի

ԿՈՄԻՏԱՍԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

և Գևորգ Գյոդայանի ջանքերի շնորհիվ հրատարակվեցին Կոմիտասի երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակության 14 հատորները (1960-2006):

Կոմիտասի երկերի ժողովածուի հրատարակությունն ունեցավ բացառիկ ռազմավարական նշանակություն՝ կարևոր դեր կատարելով Կոմիտասի ժառանգության ուսումնասիրության, համակարգման և հանրառեզակման գործում:

Սակայն անցած տասնամյակների ընթացքում մի կողմից՝ սպառվել է առաջին հատորների տպաքանակը (թեև 1-ին հատորի տպաքանակը եղել է 2700 օրինակ), մյուս կողմից՝ ժամանակի ընթացքում ի հայտ են եկել նորանոր փաստաթղթեր և տվյալներ: Միևնույն ժամանակ վերջին տարիներին աշխարհում զգալիորեն աճել է հետաքրքրությունը Կոմիտասի ստեղծագործության հանդեպ: Ելնելով այդ ամենից՝ Կոմիտասի ծննդյան 155-ամյա հոբելյանի առիթով ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհուրդը որոշեց վերահրատարակել Կոմիտասի երկերի ժողովածուի 1-6 հատորները, որոնց վրա հետագայում շարունակել էր իր աշխատանքը Ռոբերտ Աթայանը:

Այսպես, Մարգարիտ Բաբայանին հասցեագրած իր առաջին նամակում՝ թվագրված 1960 թ. մարտի 6-ով, Ռ. Աթայանը խոստովանում է, որ Կոմիտասի «երկերի ակադեմիական» մանրամասն ծանոթագրված հրատարակությունը ես իմ կյանքի կարևորագույն նպատակն եմ համարում»: Այդ միտքը կարմիր թելի պես անցնում է նրանց նամակագրության միջով: Այսպես, 1963 թ. սեպտեմբերի 14-ի նամակում կարդում ենք. «Չմայած այս բազմապիսի գործերիս, ամենակարևորը ինձ համար համարում եմ Կոմիտասի ժառանգությունը հրատարակելու աշխատանքը»: Իր ուխտին պրոֆեսոր Աթայանը հավատարիմ մնաց ողջ կյանքում և իր՝ խնամքով խմբագրված հատորները նա փոխանցեց իր սանին՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի նախկին աշխատակից,

ներկայումս ամերիկաբնակ երաժշտագետ Դավիթ Դերոյանին, ում նվիրական ջանքերի շնորհիվ էլ հրականացվում է Կոմիտասի երկերի ժողովածուի 2-րդ լրամշակված հրատարակությունը:

Հիմնվելով համերգային հայտագրերի, կոմիտասյան ծոցատետրերում առկա տարեթվերի, երգերի մշակման ոճային էվոլյուցիայի վրա՝ պրոֆեսոր Աթայանը պարզել է, թե միևնույն երգի բազմաթիվ տարբերակներից որն է **վերջին կատարյալը**: Հատորներում փոփոխվել է նաև երգերի թվաքանակը. օրինակ՝ 1-ին հատորի հին հրատարակությունում պարունակվող մեներգերը 40-ն են, 2-րդ հատորում դրանց ընդհանուր թիվն է 53 (49 մեներգ և Կոմիտասի հորինած 4 մեներգերը):

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ հաստատվեց Կոմիտասի երկերի ժողովածուի երկրորդ հրատարակության խմբագրական խորհուրդը, որի կազմում ընդգրկվեցին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի աշխատակիցները՝ արվեստագիտության դոկտորներ, պրոֆեսորներ Աննա Ասատրյանը, Աննա Արևշատյանը, Լիլիթ Երնջակյանը և Միլեր Նավոյանը, արվեստագիտության թեկնածուներ Գայանե Ամիրադյանը, Տաթևիկ Շախկուլյանը և Մարիաննա Տիգրանյանը, ինչպես նաև արվեստագիտության թեկնածու, դոցենտ Լուսինե Սահակյանը (Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա):

Այս հրաշալի նախաձեռնությունն իրականություն չէր դառնա առանց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի բարեկամների նյութական օժանդակության:

Օգտվելով առիթից՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի անունից ուզում եմ իմ երախտագիտությունը հայտնել Գլենդեյլում (ԱՄՆ) գործող «Լարք» երաժշտական ակադեմիային և նրա ղեկավարին՝ ամերիկահայ համրաճանաչ երաժիշտ Վաչե Պարունյանին, ում ֆինանսական աջակցությամբ հրատարակվել են Կոմիտասի երկերի ժողովածուի 12-րդ (2003),

Կ Ո Մ Ի Տ Ա Ս

ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ
Հատոր առաջին
(Երկրորդ հրատարակություն)

ՄԵՆԵՐԳԵՐ
ԴԱՇՆԱՄՈՒՐԻ ՆՎԱԳԱԿՅՈՒԹՅԱՆ

Կազմեց և խմբագրեց՝ Ռ. Աթայան
Հրատարակության պատրաստեց՝ Դ. Դերոյան



Երևան
ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակություն
2024


13-րդ (2004) և 14-րդ (2006) հատորները, ինչպես նաև Ռ. Աթայանի ընտանիքին, մասնավորապես նրա դուստր Նազելի Աթայանին՝ Կոմիտասի երկերի ժողովածուի 2-րդ լրամշակված հրատարակության ծախսերը հոգալու համար:

Հատուկ շնորհակալությունս ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության աշխատակազմին՝ հատորի հրատարակության աշխատանքները սեղծ ժամկետներում և հավուր պատշաճ իրականացնելու համար:

Կոմիտասի երկերի ժողովածուի 1-ին հատորի նախորդ հրատարակությունից անցել է 64 տարի: Եվ այսօր Կոմիտասի ստեղծագործությունների ակադեմիական մոր հրատարակությունը մեծանուն երգահանի ծննդյան 155-ամյա հոբելյանի առթիվ լավագույն նվերն է մեր գիտական և երաժշտական հանրությանը:

Աննա ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի
տնօրեն, արվեստագիտության դոկտոր,
պրոֆեսոր



Ս/թ. հոկտեմբերի 2-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանի «Ohannes Tchekidjian: Life and Career» գրքի շնորհանդեսը:

Ա. Ասատրյանի մենագրությունը նվիրված է ՀՀ ազգային հերոս, խՍՀՄ ժողովրդական արտիստ, խորհրդային Միության և Հայաստանի պետական մրցանակների դափնեկիր, Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի երկարամյա զեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր, ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր, պրոֆեսոր Հովհաննես Չեքիժյանի ծննդյան 95-ամյակին: Գիրքը լույս է տեսել ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

«Մասետոր Չեքիժյանին նվիրված այս գիրքն աղբյուրագիտական հուսալի հիմք է ապագա հետազոտողների համար: Այս գիրքն իմ առաջին անգլերեն

Աննա Ասատրյանի «Ohannes Tchekidjian: Life and Career» մենագրության շնորհանդեսը

աշխատությունն է, որն ուղղված է օտարալեզու ընթերցողին և շատ կարևոր է արվեստագիտական արդյունքի միջազգայնացման տեսակետից: Իմ ուսումնասիրության հերոսը բացառիկ մարդ է: Ես շնորհավորում եմ մասետորին փառապանծ հոբելյանի կապակցությամբ և մաղթում, որ երկար տարիներ վայելենք նրա երաժշտությունը մեր երաժշտական Օլիմպոսի գագաթին», - ասաց Աննա Ասատրյանը:

«Աննան շատ հետևողական, լավ իմաստով ինձ հետապնդում է, չկա մի համերգ, որ ներկա չլինի, և իմ կենսագրության ավելի լավ գիտակ է, քան ես: Սա ամեն մարդու չի վիճակվում, ինձ վիճակվել է, ինչի համար շատ շնորհակալ եմ: Իմ կյանքում ավելի խորհրդավոր բան հնարավոր չէ պատկերացնել, քանի որ ես չեմ լինի, բայց այս գիրքը կլինի», - իր խոսքում նշեց մասետոր Չեքիժյանը:

Միջոցառման մասնակիցներին ողջունեց ԿԳՄՍ նախարարի տեղակալ Դանիել Դանիելյանը. «Այսօր պետք է խոսենք բոլորիս ուսուցչի, մասետորների մասետոր Հովհաննես Չեքիժյանի մասին: Չեզ նման վարպետների բարձր որակի շնորհիվ մենք պահել ենք ազգայինը և տարբեր երկրներում հնչեցրել Կոմիտաս, «Հորովել», «Գութաներգ», աշխարհին ներկայացրել հայկական խմբերգային արվեստի լավագույն էջերը: Ձեր գործունեության շնորհիվ ստեղծվեց հայ կատարողական արվեստի դպրոց, ինստիտուտ խորհրդային շրջանում, ինչը շատ կարևոր էր: Եվ արդյունքում այսօր մենք ունենք



խմբավարական դպրոց, որը հատուկ է Հայաստանին»:

Գիրքը ներկայացրեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Խաչատուր Աբովյանի անվան Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Անիտա Դուլուխանյանը. «Ես չեմ պատկերացնում որևէ հայ, որ չունենա համընթաց Կոմիտասի պաշտամունքը: Ահա և նրա գործի իսկական շարունակողը Չեքիժյանն է, որը դեռ մանկուց լսել է իրենց ընտանիքում Կոմիտասի մասին: Նրա հայրը երգել է Կոմիտասի երգչախմբում, ավելին՝ 15 օր Կոմիտասն ապրել է նրա ծնողների ընտանիքում և զարմանք ա-

ռաջացրել սակավապետությամբ ու համեստությամբ»:

Գրքում օգտագործված են բազմաթիվ աղբյուրներ, հավաքված են բոլոր այն նյութերը, որոնք ներկայացնում են մասետորի կյանքն ու գործը: Չեքիժյանը՝ որպես դիրիժոր, ղեկավարել է 69 նշանավոր նվագախմբեր: Արտասահմանում տվել է 868 համերգ: Չեքիժյանի կապելան երգել է աշխարհի 27 լեզուներով 700 ստեղծագործություններ: «Նա մեծ աշխարհ է տարել հայ երաժշտությունը», - նշեց Անիտա Դուլուխանյանը:

Միջոցառման ժամանակ ելույթ ունեցավ մասետոր Չեքիժյանի կապելան:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտի տնօրեն ընտրվեց Լիլիթ Դաշտոյանը



Ս/թ. հոկտեմբերի 16-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության նիստում ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտի տնօրենի պաշտոնում ընտրվեց ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Լիլիթ Դաշտոյանը:

Լիլիթ Դաշտոյանը ծնվել է 1974 թվականին: Սովորել է Երևանի պետական համալսարանի «Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի» ֆակուլտետում: Թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտում: Դա-

սախտել է Երևանի պետական համալսարանում և Հայաստանի ամերիկյան համալսարանում: Դասախոսում է Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանում և Երևանի պետական համալսարանում: 2007 թվականից աշխատում է ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտում՝ որպես գիտական քարտուղար, իսկ 2024 թվականի մայիսի 1-ից՝ որպես տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար: Լիլիթ Դաշտոյանը 44 գիտական հոդվածի հեղինակ և համահեղինակ է:

Ներկայացնելով ՀՀ ԳԱԱ մեխանիկայի ինստիտուտի զարգացման ծրագիրը՝ Լիլիթ Դաշտոյանը նշեց, որ ոլորտի արդի խնդիրներից են տեսական և փորձարարական հետազոտությունները, երիտասարդ գիտնականների ներգրավումը և գիտական կյանքի ակտիվացումը: Նա նշեց, որ կարևոր ուղղություններից են հիմնարար գիտության արդյունքներն արտադրության հետ կապելը, մասնավոր հատվածի հետ համագործակցությունը, մոր ուղղությունների զարգացումը, մալ բարձր վարկանիշ ունեցող միջազգային ամսագրերում տպագրության խթանումը:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին



Գրականագիտական հարցերին նվիրված միջազգային գիտաժողով

Ս/թ. հոկտեմբերի 8-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում մեկնարկեց «Գրական ուղղությունները և դպրոցները համաշխարհային դասական գրականության և ազգային գրականությունների համատեքստում (վաղ կլասիցիզմից մինչև 20-րդ դարի 20-ական թվականներ)» տիպաբանությունը, ընդհանրություններն ու առանձնահատկությունները» միջազգային գիտաժողովը:

Գիտաժողովը բացեց ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն Զեդինազ Որսկանյանը: «Հայ գրականությունը համընթաց է շարժվել համաշխարհային պրոցեսներին, յուրացրել ուղղություններն ու հոսանքները, որոնց սկզբունքները, ընդհանրություններն ու տարբերությունները հանգամանորեն լուսաբանվել են հետազոտողների աշխատություններում: Սակայն խնդիրն այն է, որ գրական ուղղությունների պատմությունը միագիծ չէ. երբեմն զուգահեռ են ընթացել, երբեմն՝ փոխլրացրել մեկը մյուսին, անցել են զարգացման մի քանի փուլեր: Տարբեր երկրներում ձևավորված նույն ուղղությունը երբեք չի եղել մեխանիկական կրկնություն: Ուստի, դեռևս արժեքների վերագնահատման խնդիրներ կան, առաջ քաշված տեսակետների վերանայման խնդիրներ, տվյալ ազգային գրականության մեջ տվյալ ուղղության և դպրոցի սահմանների ճշգրտման խնդիրներ»՝ սոցիալական, քաղաքական, կենցաղային, հոգևոր իրականության իմացությամբ, անհատի և հասարակության ծակտագրերի, կյանքի ներքին շարժումների վերլուծությամբ: Այդ է վկայում նաև գիտաժողովի հարցադրման հանդեպ մասնագիտական լայն հետաքրքրությունը. ավելի քան 34 գեկուցում, տարբեր երկրների գիտնականների մասնակցություն՝ խորքային և մասնակի հարցերի քննությամբ», - իր ելույթում, մասնավորապես, ասաց Զեդինազ Որսկանյանը:

Ողջունելով գիտաժողովի մասնակիցներին՝ ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանն ասաց. «Այս գիտաժո-

ղովը, իմ կարծիքով, ունի երկու կարևոր առանձնահատկություն: Առաջին հերթին այն, որ գիտաժողովի թեման գրականության տեսության կարևորագույն հիմնախնդիրներից է, և փորձ է արվելու դիտարկել գրական զարգացման ընթացքն ըստ գրական ուղղությունների: Գիտաժողովի մյուս առանձնահատկությունն այն է, որ բոլոր զեկուցողներն այս կամ այն ձևով անդրադարձել են գրական դպրոցներին, ստեղծագործական մտածողության զանազան ձևերին նաև ըստ գրական ժանրերի: Ես կարծում եմ, որ գիտաժողովը ոչ միայն պետք է ամփոփի, ընդհանրացնի գրական կյանքի զարգացման ընթացքը երկարատև ժամանակահատվածում, այլ նաև պիտի որոշակի խթան հանդիսանա գրական կյանքի աշխուժացման, զարգացման համար»:

Մասնակիցներին ողջույնի ուղերձ հղեց նաև Մանկու Պետերբուրգի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի դեկան, ՌԳԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սիլիանի Պիոտրովսկին՝ կարևորելով երկու երկրների գիտական և կրթական հաստատությունների համագործակցությունը և համատեղ գիտաժողովների անցկացումը:

Գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին մինչև հոկտեմբերի 10-ը՝ ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում:

Գիտաժողովը կազմակերպել էին ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքը, ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը, ՌԳԱ Ա. Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտը, Մանկու Պետերբուրգի պետական համալսարանը, Վենետիկի Միխայիլ Գլուշկոյի միաբանությունը՝ ԿԳՄՍ նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի աջակցությամբ:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՀԱՐԱՎԿՈՎԿԱՅԱՆ
ՏԱՐԱՍԱՇԵՐՅԱՆՈՒՄ ՈՒՄԱՅԻՆ
ՀԱՐԱՐԵՐՈՎԿԱՅՈՒՄՈՒՄ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ
ԵՎ ԱՐԳԱՆՅԱՆ 2020Թ. ՊԱՏԵՐԱԳՄԸ



ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում կայացավ «Հարավկովկասյան ուժային հարաբերակցության փոխակերպումը և Արցախյան 2020 թ. պատերազմը» գրքի շնորհանդեսը

Ս./թ. հոկտեմբերի 7-ին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում կայացավ «Հարավկովկասյան ուժային հարաբերակցության փոխակերպումը և Արցախյան 2020 թ. պատերազմը» գրքի շնորհանդեսը: Այն նվիրված է 2020 թվականի Արցախյան պատերազմի ժամանակ նախատեսված հերոսների հիշատակին:

Գրքի խմբագիրն է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Գոհար Իսկանդարյանը: Գրքի հեղինակներն են Գոհար Իսկանդարյանը, պատմական գիտությունների թեկնածու Լիանա Պետրոսյանը, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Քրիստինե Մելքոնյանը, քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա-

նից ի վեր՝ օգտագործելով ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալները, մշտադիտարկել է իրանական մամուլը:

Քրիստինե Մելքոնյանի ուսումնասիրության առարկան է եղել Թուրքիայի արտաքին քաղաքականությունը Հարավային Կովկասում 1991-2023 թթ.: Հեղինակն աշխատանքում ներկայացրել է վերջին 30 տարիների ընթացքում Թուրքիայի՝ հարավկովկասյան հանրապետությունների հետ ծանվորած հարաբերությունները և 44-օրյա պատերազմից հետո տարածաշրջանում իր դիրքերի ամրապնդման մոր փուլի թևակոխումը:

Ալեն Ղևոնդյանը պատասխանատու է «ՀՀ-ՌԴ և ՀՀ-ՀԱՊԿ փոխհարաբերությունները Հարավային Կովկասում ուժային հավասարակշռության փոխակերպման ներկա փուլում» հատվածի համար, որտեղ հետա-

գոտող ոչ միայն իրականացրել է դաշտային աշխատանք, այլև ուսումնասիրել է թեմային վերաբերող ողջ փաստաթղթային և պայմանագրային դաշտը: Հետազոտողը մատնանշել է այն բոլոր խնդիրները, որոնք առկա են թե՛ ՀՀ-ՌԴ հարաբերություններում, թե՛ ՀՀ-ՀԱՊԿ համագործակցության շրջանակներում:

Արտյոմ Տոնոյանն ուսումնասիրել է «Ադրբեջանի արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները և առանձնահատկությունները 1991-2023 թթ.» թեման: Նա ուշադրությունը սևեռել է այն համագնացի վրա, թե ինչպես արցախյան առաջին պատերազմում պարտված Ադրբեջանը կարողացավ վերականգնվել և ինչպիսի աշխատանքի շնորհիվ էր, որ վերջինս ի վիճակի եղավ լուծելու Արցախի հարցն իր



լեն Ղևոնդյանը, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Արտյոմ Տոնոյանը, պատմական գիտությունների դոկտոր Սերգեյ Մինասյանը, քաղաքական գիտությունների թեկնածու Բենիամին Պողոսյանը:

Գիրքը ներկայացրեց Գոհար Իսկանդարյանը: Նա իր ելույթում մասնավորապես ասաց. «Գրքի, Հայաստանի և Իրանի մոտեցումները տարածաշրջանային մոր մարտահրավերներին» ենթաբաժնում, որի հեղինակը ես եմ, ներկայացվել են ՀՀ անկախությունից հետո ձևավորված հայ-իրանական հարաբերությունները, Իրանի մոտեցումներն արցախյան խնդրին և Իրանի դիրքորոշումն արցախյան վերջին հարցում: Ես տարածաշրջանում առաջացած մոր իրողություններին: Հարցազրույց է անցկացվել ինչպես Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանների, այնպես էլ Հայաստանի Հանրապետության նախկին նախագահներ Ռոբերտ Քոչարյանի և Սերժ Սարգսյանի հետ: Օգտագործվել է Արտաքին գործերի նախարարության պատմադիվանագիտական արխիվը: Առաջին անգամ օգտագործվել են Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանիի հուշերը, որտեղ մեծ հատված կա Արցախյան խնդրի վերաբերյալ, ինչպես նաև վերջերս տպագրված Իրանի Իսլամական Հանրապետության նախկին արտաքին գործերի նախարար Մուհամմեդ Ջավադ Ջարիֆիի հուշերը, որտեղ հետաքրքիր փաստեր կան արցախյան վերջին պատերազմի և Իրանի միջնորդական առաքելության փորձերի մասին:

Լիանա Պետրոսյանը, ով թեմատիկ խմբում երիտասարդ հետազոտողն էր, ուսումնասիրել է հայ-իրանական տնտեսական հարաբերությունները անկախություն-

ցանկացած օրակարգով: Տոնոյանի աշխատանքում առկա են նաև Ալիևի ելույթները և դրանց շուրջ իրականացված վերլուծությունները:

Սերգեյ Մինասյանը հետազոտություն է իրականացրել «Վրաստանի արտաքին քաղաքականության տարածաշրջանային չափումների շուրջ» թեմայի շրջանակում: Նա ուշադրություն է կենտրոնում է պախել, թե Վրաստանը ինչպիսի քաղաքական փոփոխությունների է ենթարկվել անկախությունից ի վեր, և ինչպես դիրքավորվեց Վրաստանը արցախյան պատերազմի ժամանակ, և ինչպես են զարգանում այժմ հայ-վրացական հարաբերությունները:

«ԱՄՆ-ի և ԵՄ քաղաքականությունը Հարավային Կովկասում 1991-2023 թթ.» բաժինը պատրաստվել է Բենիամին Պողոսյանի ջանքերով, որտեղ հետազոտողը ցույց է տվել հավաքական Արևմուտքի շահերը և նրանց որդեգրած քաղաքականությունը ընդհանրապես Հարավային Կովկասում և արցախյան վերջին պատերազմի ընթացքում մասնավորապես:

Աշխատանքն ավարտվում է հավելվածով, որտեղ զետեղված է միջազգային գիտաժողովի վերաբերյալ տեղեկություն, ինչը կրկին սույն ծրագրի շրջանակներում է իրականացվել: Հավելվածները կազմվել են պատմական գիտությունների թեկնածու Մեհուա Սողոմոնյանի կողմից:

Հետազոտությունն իրականացվել է Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21Տ-5Տ218 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՄՏՔԵՐԻ ՀԱՐԹ-ԱԿ



Ալեկոժված հոգու ցավն ահավոր է: Եվ գուցե պետք չէ որևէ բան գրել, երբ ցավն անչափ է... Գուցե ցավը սրում է զգացողությունը, ու պրկված նյարդերն ամեն ինչ շատ սուր են ընկալում... Գուցե. բայց ի՞նչ անես, երբ ցավը նաև համգիստ չի տալիս, տանջում է, իր ամեն ծեռքերով սեղմում է կոկորդոն ու նաև... իր հետ հարցերի անվերջանալի շարան է բերում գիշերը, երբ փորձում ես քնել... Տարիներն արագ են անցնում, լավ օրերը անհետ, իսկ վատերը, չգիտես ինչի, հետք են թողնում:

Ջահել էինք, բանասիրականի ուսանողներ, բնականաբար կարդում էինք, շատ էինք կարդում. Խորենացի, Րաֆֆի, Միքայել Նալբանդյան, Սիամանթո, Թումանյան, Իսահակյան, Շիրազ, Սևակ... Ու ի՞նչ էր մեր գրականությունը՝ հավերժական ողբ, ամասելի ցավ, տարակուսանք, հարցականներ, դառը-դառը մտորումներ, տխուր եզրակացություններ, կորսված հայրենիք, Կոմիտաս... Ու այդ բոլորը մեր մասին, մեր տեսակի մասին:

Ջահել էինք, մեր սահմաններն ապահով էին, հեռուստացույցով բարի մուտք էին, ուսումնական հաղորդումներ, բարի ֆիլմեր... Ու կարծում էինք՝ մեր տխուր ու արյունոտ պատմությունն անցյալում է, պատմություն է, մեզանից հեռու... Հեռու տարիներով, դարերով:

Ջահել էինք, թվում էր՝ աշխարհը քաղաքակրթվել է...

Ու հանկարծ փլվեց մի բան, որ անսասն էր թվում՝ Սովետ Միությունը... Ի՞նչ ոգևորություն էր, հանրաքվե՝ անկախության համար... Մենք՝ անկախ, երազած վիճակ, բաղձալի իրականություն:

Ջահել էինք... Հետո պատերազմ, որ մեր ազգի սերունդներն տարավ, դժվար ու դաժան օրեր, որ «ամբողջիկ» էինք կոչում, հետո արագությամբ գլուխ բարձրացրած հայի տեսակ, որ անծանոթ էր, հետո սեփական երկրի անխնա բզկտում այդ նոր հայի ծեռքերով... Իսկ գուցե բնավ էլ նոր չէ՞ր... Իսկ եթե դարերի ընթացքում այդ տեսակը միշտ եղել է:

Հիմա արդեն ջահել չենք... Ու ինչ

ԵՐԱՆԻ ՀՐԱՇՔԻ ՀԱՎԱՏԱՑՈՂԻՆ

պարզվեց, տեր Աստված, ով կպատկերացներ, որ Խորենացու Ողբը այսօրվա մասին է, Թումանյանի նամակները մեզ են ուղղված, կորսված հայրենիքի նոր տարածքներ ունենք ու ապրում ենք ին՝ անբարո ու անամոթ աշխարհում:

Հարցերը համգիստ չեն տալիս. ո՞նց ստացվեց, որ հաղթեցինք, դժվար, ցավոտ, բայց հայ քաջերով, հավատով, հավատքով, կամքով, դիմանալով, իրարից ցավը խլելով...

Ո՞նց ստացվեց, որ հետո արագությամբ մոռացանք մեր Հաղթանակը հոգեբարձր ծանոթության, հարստանալու ու կայանալու մրցակազմում, օտար, սուտ արժեքները յուրացնելու ճանապարհին... Ո՞նց ստացվեց, որ լուռ հարմարվողականությամբ դիմացանք գլուխ բարձրացնող անամոթության հաղթարշավին, թալանին, Մայրենի լեզվի անխնա աղավաղումներին, ավանդական բարքերի դեմ անթաքույց քայլերին, կրթության համդեպ քամադրական վերաբերմունքին, քծնող մտավորականին, ընկճված ուսուցչուհու կարգավիճակին, ամբանակ պալատների առկայությանը, խուժանի գոյությանն ու պահվածքին...

Գուցե հենց այստե՞ղ է թաղված շան

գլուխը՝ ինչո՞ւ դիմացանք, ո՞նց հանդուրժեցինք... Թե՞ չհանդուրժողները մնացել էին պատերազմի դաշտում...

Ես չունեմ այս հարցերի պատասխանները...

Գուցե մեր դիմանալը, մեր հանդուրժելը, մեր լռությունը, մեր՝ պահի թելադրանքով ապրելը, մեր դարավոր «կարճատեսությունն» ու անմիաբանությունը իշխանության բերեցին այն տեսակին, որ երբևէ չպետք է լիներ մեր հաղթանակած հայրենիքում... Այն անհայրենիք տեսակին, որ հետևանքն էր մեր լռության: Ու մեր թեթև ծեռքով մեր երկրի տերը դարձավ հային հայի դեմ հանդուր, Հաղթանակը հողին հավասարեցնողը, զոհված հայ տղամարդու թափած արյունը ուրացողը, մեր պատմությունը վերածնողը, «ազգա-

հային ու Հայաստանը, Արցախն ու արցախցուն, մեր գիրն ու գրականությունը, մեր կրոնն ու եկեղեցին... Ի դեպ՝ նա առում է նաև իրեն գահին պահող չարացած անգետին, որովհետև անհնար է, չես կարող սիրել ու անվերջ խաբել:

Դիպուկ է նկատել Հովհ. Թումանյանը. «Չգիտեմք մենք ինչ ենք եղել, ինչ ենք արել, ինչու և ինչպես, ինչ օրով, ինչ ճանապարհով ենք էստեղ հասել: Եվ ինչ գարձանք, որ էս դրության մեջ գտնվող մարդը իր անհատական խեղճությունն ու դատարկությունը հեշտ կտարածի իր ամբողջ ցեղի ու նրա անցյալի վրա, կարիամարի իր ցեղը, իր անունից կանաչի, կուրանա, իրեն թույլ կտա իր ցեղի վերաբերյալ ամեն ստորություն և շատ-շատ կդառնա մի միջազգային ոչնչություն, որ աշ-

խարհում ոչինչ չի հարգում սկսած իրենից»:

Ու գալիս է հարցերի հարցը, արդեն բացարձակ անհասկանալի. ո՞վ ենք մենք, ո՞րն է մեր տեսակը... Կույր անգե՞տը, թե՞ հայրենիքի կորստի ցավից տառապողը, լուռ ու հարմարվող մտավորակա՞նը, թե՞ վախը հաղթահարած ըմբոստն ու անհանդուրժողը, սեփական շահի հետևից զնացողը, թե՞ արժանապատվության մասին գաղափար ունեցողը: Ու սարսափում ես ամենատրամաբանական պատասխանից՝ գուցե իրականում էս տեսակն ենք եղել միշտ, անհասկանալի ու այդչափ հակասական... Հակառակ դեպքում գուցե Մուշեղ ու Սասունը մերը կլինեին, Խորենացին չէր ողբա, Թումանյանը չէր տառապի, Կոմիտասը չէր լռի...

Ինձ ճանաչողներն ասում են՝ մի քիչ անտարբեր եղիր, մեղք ես... Գիտեմ՝ մեղք եմ, շա՛տ մեղք եմ... Ու ականա մտածում եմ՝ վա՛յ նրան, ով հրաշքի չի հավատում:

Լիլիթ ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր

ԸՇ ԳԱԱ-ում անցկացվեց «Էպոս, ինքնություն և մշակույթ» Էպոսագիտական 6-րդ միջազգային գիտաժողովը



Ս/թ. հոկտեմբերի 11-12-ին ՀՀ ԳԱԱ-ում անցկացվեց «Էպոս, ինքնություն և մշակույթ» էպոսագիտական 6-րդ միջազգային գիտաժողովը՝ նվիրված «Սասնա ծռեր» էպոսի ուսումնասիրության 150-ամյակին:

Գիտաժողովը բացեց ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն Արսեն Բոբոխյանը: Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը:

«Մեր դյուցազներգությանը նվիրված այս գիտաժողովը չափազանց կարևոր է մանավանդ մեր օրերում: Գիտաժողովի թեման՝ «Էպոս, ինքնություն և մշակույթ», շատ արդիական է, ունի ոչ միայն գիտական, մշակութային, մշակութաբանական, այլև գործնական նշանակություն՝ մեր պատմությունն ու մշակույթն օտար հարձակումներից պաշտպանելու համար:

Մեր դյուցազներգության ամբողջ տրամաբանությունն ուղղված էր անկախության ծեռքերն անը՝ ազգային-ազատագրական շարժմանը: Այսօր գիտաժողովում հնչող

դրույթները պետք է նպաստ բերեն մեր անկախ պետականության անվտանգությանը և, անշուշտ, մշակույթի, գիտության զարգացմանը»- իր ելույթում մասնավորապես ասաց Յուրի Սուվարյանը:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեցին նաև Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արման Եղիազարյանը, Հայ-ռուսական սլավոնական համալսարանից բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ազատ Եղիազարյանը, UCLA համալսարանից պրոֆեսոր Պիտեր Քաուլին, Բոննի համալսարանի պրոֆեսոր Կարլ Ռայխլը:

Երկօրյա միջազգային գիտաժողովի ընթացքում ներկայացվեց 27 զեկուցում՝ «Վիպասում, արխայիկ պատում և տարբերակայնություն», «Պատմամշակութային միջավայր և արքեոպոլիս», «Տարածաշրջանային կապեր և վիպական ավանդույթ», «Վիպական երգ և մոտիվ», «Էպոսը հարակից գիտակարգերի տիրույթում» թեմաներով նիստերի շրջանակում:

Գիտաժողովը կազմակերպել էր ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի աջակցությամբ:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին



Աստղաֆիզիկայի «HEACOSS 2024» միջազգային գիտաժողովը Երևանում համախմբել էր ավելի քան 100 գիտնականների աշխարհի տարբեր երկրներից

ՀՀ ԳԱԱ-ում տեղի ունեցավ «High Energy Astrophysics and Cosmology in the era of all-sky surveys (HEACOSS 2024)» միջազգային գիտաժողովը՝ նվիրված բարձր էներգիաների աստղաֆիզիկայի և կոսմոլոգիայի ոլորտներում արդի ձեռքբերումներին:

Գիտաժողովը կազմակերպել էր ՀՀ ԳԱԱ ԻԿԻՄՆԵՏ կենտրոն միջազգային կազմակերպությունը: Գիտաժողովին մասնակցում էին ավելի քան 110 գիտնականներ Ամերիկայի Միացյալ Նահանգներից, Անգլիայից, Գերմանիայից, Իսրայելից, Իտալիայից, Իրանից, Հայաստանից, Նորվեգիայից, Հինաստանից, Ռուսաստանի Դաշնությունից, Ֆրանսիայից և այլ երկրներից:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ ԻԿԻՄՆԵՏ կենտրոնի տնօրեն Նարեկ Սահակյանը: «Այս գիտաժողովը տեղի է ունենում աստղաֆիզիկայի և կոսմոլոգիայի համար բեկումնային ժամանակաշրջանում: Վերջին տարիներին ամբողջ երկնքի դիտումների արդյունքում գրանցվել են աննախադեպ մեծ քանակությամբ տվյալներ, որոնք հեղափոխել են մեր

պատկերացումները տիեզերքի և տիեզերական աղբյուրներում տեղի ունեցող պրոցեսների մասին, ինչը հնարավորություն է տալիս իրականացնելու տարբեր աղբյուրների և պրոցեսների համապարփակ ուսումնասիրություն: Գիտաժողովի ընթացքում ներկայացվելու և քննարկվելու են արդեն ստացված տարբեր արդյունքները: Սա կարող է նաև լավ հիմք դնել ապագա համագործակցությունների համար», - ասաց Նարեկ Սահակյանը:

Գիտաժողովի ընթացքում ներկայացվեցին զեկուցումներ աստղաֆիզիկայի արդի ձեռքբերումների վերաբերյալ, ինչպես նաև խոշորամասշտաբ գիտափորձերի վերջին արդյունքները, ինչպիսիք են «eROSITA», «James Webb Space Telescope», «MAGIC», «CTAO», «IXPE», «Pierre Auger Observatory», «WFST», «Konus-Wind» և այլն:

Նման գիտաժողովներն այսուհետ կանցկացվեն երկամյա պարբերականությամբ:

ԻԿԻՄՆԵՏ կենտրոն միջազգային կազմակերպություն

«ՊԱՐԻ ԾԻՍԱԿԱՆ ԵՎ ԲԱՆԱՀՅՈՒՄԱԿԱՆ ԵՆԹԱՏԵՔՍՏԸ»

Սեպտեմբերի 27-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում մեկնարկեց «Պարի ծիսական և բանահյուսական եմբատեքստը» խորագրով եռօրյա գիտաժողովը, որը նվիրված էր ժողովրդական պարերի բեմադրիչ, հասարակական գործիչ Գագիկ Գինոսյանի հիշատակին: Գիտաժողովին ներկայացվել էր շուրջ 40 գիտական զեկուցում: Ձեկուցողներից շատերն իրենց խոսքում նշեցին Գ. Գինոսյանի անուրանալի ավանդը՝ հայ ժողովրդական պարերի վերակենդանացման, վերամշակման և իր խոսքերով ասած ժողովրդին վերադարձնելու գործում, ինչը նա անում էր իր հիմնադրած «Կարին» ավանդական երգի և պարի համույթի միջոցով: Գիտաժողովի կազմակերպիչը ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտն էր՝ ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ:

Գիտաժողովը բացեց և հակիրճ խոսքով հանդես եկավ ինստիտուտի տնօրեն, պ.գ.թ. Արսեն Բորոխյանը՝ մասնավորապես նշելով. «Գագիկ Գինոսյանը վերջին շրջանում ամենամեծ նպաստն է ունեցել ժողովրդական պարի զարգացման գործում: Այսօր կարևոր է քննարկել պարի բանահյուսական եմբատեքստը, որովհետև պարը միայն շարժում է, տեքստ է, որ մենք կարող ենք վերծանել և հասկանալ»: Այնուհետև ողջույնի խոսք ասացին ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը և ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակութային ժառանգության վարչության գլխավոր մասնագետ, ա.գ.թ. Նաիրա Կիլիկյանը:

Լիազումար միտք, որն ընդգրկում էր տարբեր ուղղվածություն ունեցող զեկուցումներ, բացեց ինստիտուտի փոխտնօրեն, բանագետ-լեզվաբան Տորք Դալայանը, ով համառոտ ներկայացրեց նաև գիտաժողովի հղացման գաղափարը: Նա նշեց, որ պարի գիտական հետազոտությանը նվիրված մեծամասշտաբ գիտաժողով անցկացնելու միտքը ծագել էր դեռևս Գ. Գինոսյանի ողջության օրը: «Պարագիտական գիտաժողով պետք է կազմակերպենք, քանի որ պարը մեր ինքնության կարևոր բաղադրիչներից մեկն է՝ գուցեև գիտական ուսումնասիրության տեսանկյունից այսօր ինչ-որ տեղ անտեսված: Կազմակերպչական աշխատանքների ժամանակ ստացանք Գագիկ Գինոսյանի մահվան գույժը, և որևէ տարակարծություն չառաջացավ կազմկոմիտեի մեջ, որ գիտաժողովը պետք է նվիրվի հենց նրա հիշատակին: Գինոսյանը կարողացավ իր գործունեության շնորհիվ ժողովրդական պարը դարձնել զանգվածային երևույթ Հայաստանում», - ասաց Տորք Դալայանը:

Լիազումար միստի ընթացքում պ.գ.դ., պրոֆ. Համլետ Պետրոսյանը ներկայացրեց «Պարը և խնջույքն ըստ միջ-

նադարյան դրոշմազարդ կարասների և տապանաքարային պատկերաքանդակների» զեկույցը: Իր խոսքում Հ. Պետրոսյանն անդրադարձավ նաև Գ. Գինոսյանի՝ մարդ-արվեստագետ-ազատամարտիկ կերպարին: Բ.գ.թ. Նվարդ Վարդանյանը ներկայացրեց «Շրջանի խորհուրդը ժողովրդական խաղերի, հայրենական կյանքի պարերի և ծիսերգերի համատեքստում» զեկույցը: Ա.գ.թ., «Կարին» համույթի անդամ Անի Հակոբյանի զեկույցը նվիրված էր առանցքային մի խմբի՝ «Ինքնությունից պար», թե՛ պարից ինքնություն: Ուշագրավ մեկ այլ նյութ՝ «Եվրոպական պարերը և հայ իրականությունը (18-րդ դար-1930-ական թթ.)», ներկայացրեց Բ.գ.թ. Արծվի Բախչինյանը:



Գիտաժողովի առաջին օրը տեղի ունեցան ևս երեք թեմատիկ նիստեր: «Պար և ազգագրական միջավայր» խորագրով նիստում զեկուցողները ներկայացրին որոշակի ազգագրական միջավայրերում ավանդական պարի դրսևորումները, ինչպես նաև ավանդական պարի մշակութային շարունակականության հարցերը: «Գագիկ Գինոսյանը՝ պարագետ և պարակերտիչ» նիստը նվիրված էր Գինոսյանի ստեղծագործական գործունեության և կյանքի առանձին դրվագների լուսաբանմանը:

Պարագիտական գիտաժողովի աշխատանքները սեպտեմբերի 28-ին և 29-ին շարունակվեցին Հնագիտության և ազգագրության ինստիտուտի նիստերի դահլիճում: Երկրորդ օրվա լիազումար նիստի զեկուցողները մշակութային մարդաբաններ էին, որոնք դիտարկում էին պարը հենց մշակութային մարդաբանության ոսկյալով:

Հաջորդ նիստը, որ վերնագրված էր «Պար և ազգային պատմություն (նարատիվ)», անդրադարձավ վաղխորհրդային Հայաստանում պարային մշակույթի նոր մոդել և բեմական տարազ ստեղծելու գործընթացներին, այնուհետև՝ խորհրդային արդիականացման նախագծում ազգային պատմույ-

թի ձևավորմանը, այդ թվում՝ ժողովրդական պարի և ազգագրական համույթի օրինակով, ինչպես և կորսված մի պարի մասին հիշողությունների՝ անկախ Հայաստանում արձանագրմանը և այդ պարի վերակազմությանը: Նույն օրվա հաջորդ երկու թեմատիկ նիստերը վերաբերում էին պար-բանահյուսություն կապին և պարի միջգիտակարգային ուսումնասիրությանը: «Պար և բանահյուսություն» խորագրի ներքո զեկուցողները ներկայացրին զանազան պարերգերի ժանրային փոխակերպումներն ու դրանց անդրադարձները բանահյուսական այլ ժանրերում, ինչպես և պարերգերի բանահյուսական գրառումները: «Պարը միջգիտակարգային տիրույթում» նիստի զեկուցումները վերաբերում էին պարերի գրառման և արխիվացման գործում շարժման եռաչափ մոդելավորումն օգտագործելուն, գեղարվեստական տեքստ-պարային շարժում փոխառնություններին, Սրբուհի Լիսիցյանի գիտական ու բեմադրական գործունեությանը և պարերգերի գրառման գործում նրա ունեցած դերին:

Վերջին երրորդ օրվա նիստերը երկուսն էին՝ «Պարի պատմություն» և «Պար և թերապիա»: Առաջին նիստի զեկուցումները շոշափեցին ավանդական պարի բեմականացման հետ կապված տարաբնույթ հարցեր, անդրադարձան սգո-ոգեկոչման պարերին ու պարերգերին, ինչպես և կայծակնահար մահացածի շուրջ կատարվող ծիսական պարին: Երկրորդ նիստի զեկուցողները, պարը դիտարկելով հոգեբանական և բժշկական տեսանկյուններից, ներկայացրին պարաշարժողական թերապիայի կիրառումը զանազան ուղիներում, այդ թվում՝ զինված ուժերում:

Գիտաժողովն ուղեկցվում էր աշխույժ մշակութային ծրագրով: Սեպտեմբերի 28-ին ինստիտուտի շենքի բակում ելույթ ունեցավ Գագիկ Գինոսյանի հիմնադրած «Կարին» երգի-պարի համույթը, իսկ սեպտեմբերի 29-ին գիտաժողովը եզրափակվեց «Մասունք» համույթի վարակիչ ելույթով, որի երաժիշտներն ազգային երգ-երաժշտության հնչյունների ներքո գիտաժողովի մասնակիցներին հենց նիստերի դահլիճից առաջնորդեցին դեպի բակ, որտեղ հետազոտողներից շատերը իրենց փայտե պարողների շարքին: Մասնակիցներից շատերը ցանկություն էին հայտնում, որ նման գիտաժողովներն ունենան պարբերականություն և կազմակերպվեն գոնե 2-3 տարին մեկ անգամ, քանի որ տվյալ առարկան տեսականորեն հետազոտողների և դրանով գործնական կյանքում զբաղվողների դիտանկյունները փոխադարձաբար օգտակար են միմյանց համար, և այստեղ է, որ ցայտուն երևում է, թե ինչպես կարող են արդյունավետորեն շաղկապվել հետազոտական աշխատանքը և կիրառականությունը:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

ՀՀ ԳԱԱ-ում անցկացվեց Համահայկական բնագիտական կրթական VII գիտաժողովը

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում անցկացվեց «Բնագիտությունը, մաթեմատիկան, տեխնիկան, ինֆորմատիկան XXI դարում. հանրամատչելիացման և ուսուցման հիմնախնդիրներն ու լուծումներ» թեմայով Համահայկական բնագիտական կրթական VII գիտաժողովը: Այն կազմակերպել էին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը և ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնը:

Գիտաժողովին մասնակցեցին գիտնականներ, մանկավարժներ, առաջատար մասնագետներ ՀՀ գիտական և կրթական կառույցներից: Մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը: «Ներկայումս ամբողջ աշխարհում զարգացում է ապրում գիտության հանրամատչելիացման ուղղությունը: Դեռ դպրոցից աշակերտը պետք է հասկանա՝ ուր գնա և ինչ մասնագիտություն ընտրի: Այդ ցանկությունը պետք է դարձնում առաջնա՝ Մենք ևս պետք է առաջ տանենք այս ուղղությունը և զարգացնենք գիտություն-կրթություն կապը, ԳԱԱ ինստիտուտների և բուհերի հնարավորությունները տանենք դեպի դպրոց և ուսուցիչների միջոցով օգնենք աշակերտներին», - ասաց Աշոտ Սաղյանը:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրամատչելիացման և զարգացման վարչության պետ, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կամո Աբայանը նշեց՝ սույն գիտաժողովի հարթակն իր մասնա-



գիտական ներուժով եզակի է նման խնդիրներ քննարկելու համար: «Գիտության հանրամատչելիացումը մեր ժամանակներում խիստ պահանջված է: Այս խնդրի լուծման կարևոր բանալիներից մեկը գտնվում է կազմակերպված ուսուցման տիրույթում՝ դպրոցում և համալսարանում: Մասնավորապես բնական գիտությունները, լինելով քաղաքակրթական զարգացումների հիմքում և դառնալով համամարդկային մշակույթի կարևոր մաս, այժմ, կարծես, չունեն այն ձգողական ուժը, որի շնորհիվ հատկապես նոր սերունդը ցանկանա ծանոթանալ նրա գաղտնիքներին և իր հերթին բացի բնության անհայտ գաղտնարանները: Գիտության հանրամատչելիացման գործընթացը մենք դիտարկում ենք որպես գիտության

հիմունքների արդյունավետ ուսուցման կարևոր պայմաններից մեկը», - ասաց Կամո Աբայանը:

ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի նախ և մեզո համակարգերի ֆիզիկայի լաբորատորիայի վարիչ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հայկ Սարգսյանը նշեց. «Մեր ակադեմիան պետք է դառնա գիտության հանրառեչակման և տարածման գլխավոր կենտրոն: Մենք աշխարհին կարող ենք ներկայանալ որպես գիտության և տեխնոլոգիայի երկիր: Կարծում են՝ գիտական առումով ակադեմիայի դերն աճելու է և դառնալու է որոշ հարցերում հանգուցային: Ըստ իս՝ սա կարևորագույն սկիզբն է, որի արդյունքում առավել արդյունավետ

աշխատող փորձագիտական համայնքը՝ գիտնականներ, առաջատար մանկավարժներ, հետազոտողներ, համախմբվելու են ԳԱԱ-ի շուրջ, և մենք կկարողանանք կոտրել այն կարծրատիպերը, որոնք տարիների ընթացքում ձևավորվել են գիտության նկատմամբ: Պետության հզորացման ամենակարևոր հանգամանքը կիրի հասարակությունն է», - ասաց Հայկ Սարգսյանը:

Գիտաժողովի ընթացքում զեկուցումներով հանդես եկան առաջատար գիտնականներ, մանկավարժներ և մասնագետներ՝ ներկայացնելով ֆիզիկայի, քիմիայի, աշխարհագրության, մաթեմատիկայի, քվանտային մեխանիկայի, տիեզերագիտության, երկրաբանության, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտների հիմնախնդիրներն ու արդի հետազոտությունները, ինչպես նաև մաթեմատիկայի և ինֆորմատիկայի, ֆիզիկայի, աստղագիտության և բնագիտության, կենսաբանության, քիմիայի, աշխարհագրության հանրամատչելիացման և ուսուցման հիմնախնդիրները: Երկօրյա գիտաժողովի մասնակիցները քննարկեցին և մշակեցին գիտության հանրամատչելիացման և ուսուցման հիմնախնդիրների լուծման առաջարկությունների փաթեթ, որը նախատեսվում է ներկայացնել ՀՀ կառավարություն և շահագրգիռ մարմիններին:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՄԵՐ ՄԵԾԵՐԻ ԿՅՈՒՆՔԻՑ



Մեծանուն գրող Կոստան Ջարյանը (1885-1969) անցել է երկարատև որոնումների ու դեգերումների բարդ ու դժվարին ճանապարհ: Այդ փորձարկահույզ կյանքի ու գործունեության վերաբերյալ պատմական և գրականագիտական բազում հարուստ տեղեկություններ է պարունակում Կ. Ջարյանի «Նավատոմար» ժողովածուն, որից ընթերցողին ենք ներկայացնում որոշ դրվագներ:

Քսան տարեկան հասակում Կոստան Ջարյանն ուսումնառության նպատակով Թիֆլիսից մեկնում է Շվեյցարիա, և 1905 թվականից սկսվում է նրա կյանքի ողիսականը: Այդ շրջանում ժնևում էին կենտրոնացել ռուս քաղաքական վտարանդիները. մի մասը համախմբվել էր Գ. Պլեխանովի, մյուսը՝ Վ. Լենինի շուրջը: Վերջինիս կողմնակիցների ժողովներին և

հավաքներին ներգրավվում է նաև Կ. Ջարյանը: Իր հուշերում նա գրում է. «Երբեմն գալիս էր Լենինը... Համեստ, ինքն իր մեջ քաշված մարդ էր: Քիչ պահանջներով, ժուժկալ, բնական բոլոր ձևերի մեջ: Պլեն Պալեի մոտ մի փոքրիկ ճաշարան կար, ուր 75 սանթոնով համեստաբար ուտում էինք: Երբեմն գալիս էր մեզ հետ, ճաշում էինք միասին և հացի հետ կլլում իր ամեն խոսքը»:

Սակայն շուտով մի իրադարձություն շրջադարձային նշանակություն է ունենում Կ. Ջարյանի կյանքում: 1907 թ. հունիսին Թիֆլիսի Երևանյան հրապարա-

Բոլշևիկյան կուսակցությունը նույնպես բուն շարժում է ծավալում՝ մեղադրյալներին բանտից ազատելու համար: 1908 թ. օգոստոսին Լենինը նամակ է հղում միջազգային բանվորական շարժման ակամավոր գործիչ, Երկրորդ ինտերնացիոնալի բյուրոյի քարտուղար Կամիլ Յուլիսմանսին՝ խնդրելով նրան պաշտոնապես վկայել, որ մեղադրյալները Սոցիալ-դեմոկրատական կուսակցության անդամ են և ծավալել են քաղաքական գործունեություն, ինչը կարող էր նրանց ազատել քրեական հանցանքի պատասխանատվությունից: Կամիլ Յուլիսմանսը

նակ անց նա մեկնում է Իտալիա:

Կոստան Ջարյանն այդ շրջանում եվրոպական գրական շրջանակներում արդեն ճանաչված անուն էր: Նրա «Երեք երգեր ասելու համար վիշտը երկրի և վիշտը երկնքի» ծավալուն գործը 1915 թ. Մեծ եղեռնի օրերին տպագրվում է իտալական տարբեր հանդեսներում և մամուլի միահամուռ գնահատմամբ համարվում է ժամանակի գրական խոշոր երևույթ: Այն վերահրատարակվում է նաև «Իտալիայի և աշխարհի գրողները» մատենաշարով, որի առթիվ Կ. Ջարյանին շնորհավորական խոսք է հղում մեծանուն Ռաբինդրա-

ԴՐՎԱԳՆԵՐ ԿՈՍՏԱՆ ՋԱՐՅԱՆԻ ՈՒԻՍԱԿԱՆԻՑ

կում տեղի ունեցավ XX դարի սկզբի ամենամեծ կողոպուտը: Բոլշևիկյան կուսակցության ցուցումով Սիմոն Տեր-Պետրոսյանը՝ Կամոն, իրականացրեց ռուսական պետական գանձատան կողոպուտը: Կուսակցությանը հաջողվեց Եվրոպա տեղափոխել միլիոնավոր ռուբլիներ:

Չերքը հասավ դրանք այլ երկրների տարադրամով փոխանակմամբ: Վ. Լենինի որոշմամբ այդ գործը հանձնարարվում է երեք անձանց, այդ թվում՝ Կոստան Ջարյանին: Վերջինս մեկնում է Սյունիսեն, որտեղ նա իր ընկերների հետ պետք է փոխանակեր դրամը: Բայց Ռուսաստանի ոստիկանությունը եվրոպական երկրների գործընկերներին էր տրամադրել 500-ռուբլիանոց թղթադրամների համարանիշները: 1908 թ.՝ դրանց փոխանակման պահին, Կոստան Ջարյանն իր ընկերների հետ ձերբակալվում է: Նրան բանտից ազատելու համար շատ ջանքեր են գործարդում գրականության և մշակույթի գործիչները, մասնավորապես Էմիլ Վերհարնը:

վկայում էր դա, և ի վերջո 1909 թ. հունիսին Կ. Ջարյանն ազատվում է բանտից:

Նա մեկնում է Փարիզ, վերջին անգամ տեսակցում է Լենինի հետ մի փոքրիկ սրճարանում՝ նրանից ստանալով հանձնարարական մի նամակ՝ ուղղված Կամիլ Յուլիսմանսին, և 50 ֆրանկ: Լենինը վերջինիս նամակով խնդրում է օգնել և աջակից լինել Ջարյանին ուսումը շարունակելու գործում: Կոստան Ջարյանը մեկնում է Բրյուսել՝ շարունակելու համալսարանական ուսումնառությունը: Նա հեռանում է քաղաքական կյանքից և ամբողջովին մխրճվում գրական գործունեության մեջ:

1910-1914 թթ. Կոստան Ջարյանն ապրում և ստեղծագործում է Կոստանդնուպոլսում, սերտ կապեր հաստատում արևմտահայ գործիչների, մասնավորապես Դանիել Վարուժանի հետ: Այնուհետև տեղափոխվում է Բուլղարիա, Մոֆիայում հանդիպում հայ ժողովրդի մեծ բարեկամ Յոհաննես Լեփսիուսի հետ: Կարճ ժամա-

նաթ թագորդ: Իսկ իտալական թերթերից մեկը, որի խմբագիրն էր հետազայում հանրահայտ Բենիտո Մուսսոլինին, գրում է. «...Վերջին տարիներին լույս տեսած գրքերից «Երեք երգերը» ամենաարժեքավորն է: Մի ազգ, որ այդպիսի բանաստեղծներ ունի, արժանի է իր ճակատագրի տերը դառնալու»:

Աշխարհի տարբեր երկրներում Կոստան Ջարյանի դեգերումների ողիսականին վերջ է դրվում 1960-ական թթ. սկզբին: Ամենայն ճայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը 1960 թ. իր ամերիկյան ուղևորության ընթացքում հանդիպում է գրողին, որն այդ ժամանակ դասախոսում էր Կալիֆոռնիայի Բերքլիի համալսարանում, հորդորում է նրան վերադառնալ Չայաստան: Ամսալով Վեհափառի առաջարկին Կոստան Ջարյանը 1962 թվականից մշտական բնակություն է հաստատում Երևանում:

«Գիտություն» թերթի խմբագրություն

ՄԵՐ ՀԱՅՏՆԻ ՈՒ ԱՆՀԱՅՏ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԸ

ԴԻՄՆԵՅԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՅԱԶԳԻ ՓՐԿԻՉԸ


Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ամերիկյան իշխանությունները որոշել են Ուոլթ Դիսնեյի ստուդիայից հեռացնել և ոչնչացնել մուլտֆիլմերում արդեն օգտագործված ողջ նկարչական արխիվը՝ գտնելով, որ դրանք արժեք չունեն: 1984 թ. Դիսնեյի ստուդիան հայտարարել է, որ 1945 թ. վերջին ոչնչացվել է, ամենահամեստ հաշվարկներով, ավելի քան 20 միլիոն էսթիզ և նկար:

Սակայն դիսնեյյան մուլտաշխարհի ուրվանկարների, ֆոնային պատկերների, պատկերաշարերի հարյուրավոր մուլշներ ամրաթմ վերացումից փրկվել են ստուդիայի աշխատակից մի հայրորդ՝ Ջոն Բասմաջյանի շնորհիվ: Ստուդիայի մի քանի համախոհների հետ նա հավաքել է մուլտիպլիկացիոն արվեստի մեծ քանակի մուլշներ:

Ջոն Բասմաջյանը ծնվել է 1899 թ. Նյու Ջրքսի նահանգում: Ծնողներն Ամերիկա էին գաղթել 1895 թ.: Օսմանյան կայսրությունից, համիդյան կոտորածներից հետո:

1930-ականների սկզբին Ջոն Բասմաջյանը տեղափոխվել է Լոս Անջելես, աշխատել է Ռիչֆիլդի նավթի ընկերության գրաֆիկական արվեստի բաժանմունքում, իսկ նրա փակումից հետո՝ կինոստուդիաներում: Նա է ձևավորել «Ռեփաբլիք» կինոստուդիայի խորհրդանիշ արժիվը, որը երևում է ստուդիայի արտադրած ֆիլմերի սկզբում: Սակայն Ջոնը, լինելով հռչակավոր Ուոլթ Դիսնեյի ջերմ երկրպագուն, վաղուց երազել է աշխատել նրա հետ, և այդ հնարավորությունը նրան ընձեռվել է 1939 թվականին: Աշխատանքի անցնելով Դիսնեյի ստուդիայում՝ Ջոն Բասմաջյանը հազիվ թե իմանար, որ այս մի զբաղմունքը փոխելու է իր և ընտանիքի ողջ կյանքը... Արագ հմտանալով գործի մեջ՝ Բասմաջյանը դարձել է Դիսնեյի մուլտիպլիկատորների խմբի անդամ: Հատկապես մտերմացել է նկարիչ Ուորդ Քեմբլի հետ, որի ամուսնը երևում է Դիսնեյի դասական դարձած ֆիլմերի մեծ մասում:

Երբ ԱՄՆ-ը միացել է Երկրորդ աշխար-



համարտին, կառավարությունը զբաղեցրել է Դիսնեյի ստուդիան՝ վերածելով ռազմական հենակետի: Մինչև անգամ զինամթերք են պահել ավտոկայանատեղիում և որոշ շենքեր օգտագործել են որպես զորանոց: Ստուդիան սկսել է ուսումնական ֆիլմեր պատրաստել ռազմական նպատակներով: Ի թիվս այլ աշխատանքների, Ջոն Բասմաջյանին հանձնարարվել է աշխատել «Հաղթանակ օդուժի միջոցով» գործի էկրանավորման վրա, մասնավորապես պատասխանատու լինել պատկերվող քարտեզների և օդային ուղիների համար:

1945 թվականի մի օր Ջոն Բասմաջյանը տուն գալով հետը բերել է մի շարք նկարներ ու սրտմեղած ասել է կնոջը. «Չեմ կարող հավատալ, չեմ կարող: Նրանք արխիվից դեն են նետում, ինչ կարող են: Նրանց կարծես ավելի շատ տեղ է պետք, քանի որ կառավարությունը վերցրել է ստուդիան: Մեզ ասացին, որ եթե ուզում ենք, կարող ենք իջնել նկուղ և էլի նկար վերցնել, քանի դեռ բոլորը չեն թափել»: Հայազգի նկարիչը գործի գլուխ է կանգնել՝ չկարողանալով անտարբեր մայել, թե ինչպես կարող են անդարձ կորչել այդ ահեղի քանակությամբ նկարները: Գիտակցելով դրանց արժեքն ամերիկյան կերպարվեստի և մուլտիպլիկացիայի պատմության համար՝ նա շարունակել է նկարները տանել իր տուն, տեսակավորել և մեկ առ մեկ զբաղվել

դրանց մշակմամբ:

Երբ 1970-ականներին Դիսնեյի ստուդիան պաշտոնապես բացել է իր արխիվը, դիմել է Բասմաջյանին՝ խնդրելով վերադարձնել մուլշների մի մասը, քանի որ իրենց մոտ մնացել էր ընդամենը 50 մուլշ: Բասմաջյանը քաղաքավարի մերժել է, սակայն մշել է, որ հարկ եղած դեպքում ուրախ կլինի ստուդիային տրամադրել ցանկացած նյութ՝ հետազոտման կամ հղման նպատակով:

1984 թ. դեկտեմբերի 8-ին Նյու Յորքի «Քրիսթի Իսթ» նշանավոր աճուրդում նախատեսվել է վաճառքի համել նաև Բասմաջյանի հավաքածուն: Սակայն Դիսնեյի ստուդիան աճուրդը դադարեցնելու հայց է ներկայացրել դատարան՝ պատճառաբանելով, որ այդ գործերը ստուդիայի սեփականություն են և ապօրինի են անցել Բասմաջյաններին: Դատարանը մերժել է ընթացք տալ գործին՝ գտնելով, որ նկարները դրամական արժեք չեն ներկայացրել մի ստուդիայի համար, որը չի ունեցել իր նյութերը խնամքով պահպանելու քաղաքականություն: Աճուրդը տեղի է ունեցել, Բասմաջյանի հավաքածուից վաճառվել է մոտ 400 մուլշ: Ջոնն իրեն բավարարված է զգացել և չի լսել իր իրավաբանների հորդորը՝ դատի տալ ստուդիային՝ իրեն գրաքարտելու համար: Նա ծեր էր և սրտի լուրջ խնդիր ուներ, ուստի նախընտրել է իր վերջին տարիներն անցկացնել առանց հավելյալ ցնցումների:

Ջոն Բասմաջյանը վախճանվել է 1989 թ. հունվարի 22-ին 89 տարեկան հասակում: Սերունդները պահպանում են նրա հավաքածուն, գործուն է նրա կյանքն ու ժառանգությունը ներկայացնող կայքէջ, իսկ նրա կատարած շնորհակալ գործը մշտապես ակնածանքով են հիշում Դիսնեյի արվեստի պատմության հետազոտողները:

Արծվի ԲԱՆՉԻՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների
բեկնածու

ԱՎԱԴԵՄԻԱԿԱՆ ՆՈՐ

ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ա. Ագալովյան - Обобщенно-ньютонова теория Всемирного тяготения и Черные дыры.

2. А. Гукасян - Движение деформированного твердого тела (Кинематический анализ и приложения).

3.Ա. Հակոբյան - Պետականության վերականգնման գաղափարը հայոց պատմության հոլովություն (XVI դ. կեսեր - XX դ. սկիզբ):

4.Գ.Պողոսյան - Պատկերագրական առանձնահատկությունները Վանի թագավորության կերպարվեստում:

5. Հեղ. խումբ - Հարավկովկասյան տարածաշրջանում ուժային հարաբերակցության փոխակերպումը և Արցախյան 2020թ. պատերազմը:

6. Կոմիտաս - Երկերի ժողովածու, հ. 1:

7. «Արևելյան աղբյուրագիտություն», հ.5:

8. Ա. Պողոսյան - Կենսահիմքորմատիկայի հիմունքներ. տվյալների մշակում:

9. «Պատմաբանասիրական հանդես», 2024 թ., N 2:

10. «Լրաբեր հասարակական գիտությունների», 2024 թ., N 2:

11. «Բանբեր հայագիտության», 2024 թ., N 2:

ԵԳԱՇ-ն ամփոփել է «Երիտասարդ գիտնականների վերապատրաստում արտասահմանում» մրցույթի արդյունքները

«Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագիրը» ամփոփել է 2024 թվականի «Երիտասարդ գիտնականների վերապատրաստում արտասահմանում» մրցույթի արդյունքները:

Մրցույթի նպատակներն են աջակցել երիտասարդ գիտնականների մասնագիտական որակավորման բարձրացմանը, երիտասարդ գիտնականների համար հասանելի դարձնել արտասահմանյան առաջատար գիտական կենտրոններում վերապատրաստվելու հնարավորությունը, նպաստել ՀՀ գիտական արդյունքի որակի բարձրացմանը և միջազգայնացմանը:


Մրցույթի առաջին՝ արտասահմանյան գիտական կենտրոններում երիտասարդ գիտնականների վերապատրաստման համար ֆինանսավորման տրամադրման ենթածրագրով շահառու են ճանաչվել Ժենյա Պողոսյանը՝ ՀՀ ԳԱԱ էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնից, Սոնյա Խուրդյանը և Նելլի Ղարիբյանը՝ ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտից, Սոնա Գրիգորյանը՝ ՀՀ ԳԱԱ Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտից, Բաղիշ Հարությունյանը և Արմեն Սարգսյանը՝ ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնից, Հասմիկ Խաչատրյանը՝ ՀՀ ԳԱԱ օրգանական

և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնից, Արտյոմ Պետրոսյանը, Արմինե Քոսյանը, Լուսինե Հայրապետյանը, Էմիլ Աղամյանը և Անահիտ Պապիկյանը՝ Երևանի պետական համալսարանից, Գոռ Երանյանը՝ «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտից:

Մրցույթի երկրորդ՝ արտասահմանյան գիտական կենտրոններում գիտական ստորաբաժանումների երիտասարդ դեկավարների մասնագիտական վերապատրաստման և հմտությունների կատարելագործման համար ֆինանսավորման տրամադրման ենթածրագրով շահառու է ճանաչվել Արևիկ Ասատրյանը՝ ՀՀ ԳԱԱ Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտից:

Իսկ մրցույթի երրորդ՝ արտասահմանյան կազմակերպություններում ժամանակակից սարքեր-սարքավորումների վրա աշխատելու հմտությունների կատարելագործման համար ֆինանսավորման տրամադրման ենթածրագրով շահառու է ճանաչվել Սարիան Գևորգյանը՝ ՀՀ ԳԱԱ Թախտաշյանի անվան բուսաբանության ինստիտուտից:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին



ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարանում բացվեց նոր կենտրոն

Ս/թ. հոկտեմբերի 24-ին տեղի ունեցավ Բյուրականի աստղադիտարանի ՅՈՒՆԵՍԿՕ-ի արժեքին նվիրված կենտրոնի բացման արարողությունը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի բյուրականյան կենտրոնը նվիրված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Վշխարհի հիշողություն» միջազգային գրանցամատյանի փաստագրական արժեք հանդիսացող հանրաճանաչ Մարգարյանի շրջահայությունը (գրանցվել է 2011 թվին): Այս արժեքը ՅՈՒՆԵՍԿՕ-ի ցանկերում ընդգրկված հայկական ընդամենը 14 և փաստագրական 4 արժեքներից մեկն է, ինչպես նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի բոլոր ցանկերում ընդգրկված աշխարհի բոլոր արժեքների մեջ հազվագյուտ գիտական արժեքներից մեկը: Նրա հիման վրա է ստեղծվել նաև Հայկական վիրտուալ աստղադիտարանը (ՀՎԱ, ArVO):

Հիշեցնենք, որ Մարգարյանի շրջահայությունը (Առաջին բյուրականյան շրջա-

հայություն) ստեղծվել է Բյուրականի աստղադիտարանում և պարունակում է Բյուրականի աստղադիտարանում հայ անվանի աստղագետ Բենիամին Մարգարյանի և նրա գործընկերների կողմից 1965-1980 իրականացված եզակի աստղագիտական շրջահայության գրառումները: Շրջահայությունը ներառում էր Տիեզերքի երբևէ կատարված ամենամեծ աստղագիտական սպեկտրադիտական

ուսումնասիրությունը և համարվում է 20-րդ դարի դիտողական աստղագիտության մեծագույն ձեռքբերումներից մեկը:

Այս ուսումնասիրությունները կատարվել են ԲԱ 1մ հայելու տրամագծով Շմիդտի աստղադիտակով: Դրանք ընդգրկում են ողջ հյուսիսային երկինքը և հարավային երկնքի մի մասը բարձր զալակտիկական լայնություններում, ինչպես նաև Ծիր Կաթինի որոշակի հատված: Այն թվայնացվել է 2002-2007 թթ. Արեգ Միքայելյանի և իր թիմի կողմից՝ ստեղծելով թվայնացված Առաջին Բյուրականյան շրջահայությունը՝ ցածր դիսպերսիայով սպեկտրերի քանակով (40 միլիոն սպեկտր) ամենամեծ շտեմարանն է աշխարհում և բոլոր բնագավառներում թվայնացման առաջին նախագիծն է Հայաստանում:

ՀՀ ԳԱԱ Կիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարան

ԳԻՏԱԿԱՆ ԽՃԱՆԿԱՐ

Երկիր մոլորակը, որքան էլ ուսումնասիրված, այնուամենայնիվ դեռ բազում գաղտնիքներ ունի մեզ համար, գաղտնիքներ, որոնք ուղղակի հնարավոր չէ բացատրել մերօրյա գիտության զարգացման մակարդակով:

Մոլորակի ամենաառեղծվածային վայրերից մեկը, որն առաջին անգամ բացահայտել են դեռ հնդկացիները, գտնվում է Կալիֆոռնիայում. այստեղ ֆիզիկայի մի քանի օրենքներ պարզապես չեն գործում, քանի որ գնդերը թեք հարթությամբ գլորվում են ոչ թե ներքև, այլ վերև, առարկաները, որոնք պետք է կանգնեն ուղիղ, անկյամբ թեքված են գետնի վրա, իսկ մարդիկ կարող են քայլել պատերով:

Հետագայում անսովոր երևույթները գրավել են Կալիֆոռնիա այցելող զբոսաշրջիկների կամ նույն վայրում ամառանոց կառուցող ինժեներների ուշադրությունը: Այստեղ մարդիկ իրենց իրական հասակից ավելի բարձր կամ ցածր են թվացել, իսկ մի քանի անգամ վերականգնված տունը այդպես էլ ուղիղ չի կանգնել, թեև հարթաչափը բազմիցս ցույց է տվել ուղիղ հարթություն:

Վերջին տարիներին կատարված դիտարկումները ցույց տվեցին, որ նման վայրեր կան երկրագնդի տարբեր տեղերում, այդ թվում նաև Հայաստանում: Սակայն հարկ է նշել, որ դրանք հայտնաբերելը այնքան էլ հեշտ չէ, քանի որ նման անոմալիաները գործում են խիստ սահմանափակ տարածքներում:

Շվեյցարիայի գիտնականներն անցկացրել են կենդանիների մտավոր կարողությունների բացահայտման հետաքրքիր գիտափորձ և պարզել, որ մարդուց հետո մտավոր ունակություններով երկրորդ տեղում է դելֆինը, երրորդում՝ փիղը, իսկ կապիկը գրավում է չորրորդ՝ ոչ մրցանակային տեղը միայն: Պարզվում է՝ դելֆինի ուղեղի կեղևն ունի երկու անգամ ավելի շատ ծալքեր, և նա ունակ է 1.5 անգամ ավելի շատ գիտելիքներ յուրացնելու և ամբարելու, քան մարդու ուղեղը: Արտառոց կարող է թվալ, սակայն դա-

րեր շարունակ փոփոխվում են, որոնցք երազել են հայտնաբերել փղերի դիակներ ու չեն գտել, չեն կարողացել բացատրել, թե ինչու երբևէ չեն հանդիպել սատկած փղերի դիակների: Ուղղակի նրանք տեղյակ չեն Ռոդեզայի «Մերու» արգելոցում պատահածին, այլապես կհասկանային փղերի գաղտնիքը: Արգելոցի աշխատակիցները մի անգամ տեսել են, թե ինչպես փղերը հավաքվել են իրենց սպանված առաջնորդի դիակի մոտ, կնճիթներով փոս են փորել և թաղել նրան: Հետևաբար՝ նրանք ցեղակիցների դիակներն անտեր չեն թողնում, այլ հողին են հանձնում:

Մոլորություններ կան և ոչխարների հարցում: Նրանք բնավ էլ արժանի չեն հիմարության չափանիշ համարվելու իրենց վարկանիշին. ուշիմ են, խորաթափանց, ունեն գերազանց հիշողություն և անսխալ հիշում են մարդկանց դեմքերը, մի բան, որ դժվար կարողանա կատարել մարդը, եթե հարկ լինի հիշել ոչխարների դեմքերը:






Հանրահայտ Մեռյալ ծովի ջուրն արտակարգ աղի է, այնքան, որ նրա մեջ չի կարող ապրել ոչ մի կենդանի էակ: Արևմտյան Ասիայի տոթակեզ, անանձրև կլիմայի պատճառով ջուրն ուժեղ գոլորշիանում է ծովի մակերևույթից: Բայց միայն մաքուր ջուրն է գոլորշիանում:

Լուծված աղերը մնում են ծովում և բարձրացնում ծովի աղիությունը: Ահա թե ինչու Մեռյալ ծովի ջուրը պարունակում է ոչ թե 23 % աղ (ըստ զանգվածի), ինչպես ծովերի ու օվկիանոսների մեծամասնությունը, այլ 27 % և ավելի:

Մեռյալ ծովի չափից բարձր աղի պարունակությամբ է պայմանավորված նրա այն առանձնահատկությունը, որ այդ ծովի ջուրը նկատելիորեն ծանր է սովորական ծովերի ջրերից: Այդ ծանր հեղուկի մեջ հնարավոր չէ սուզվել:

Մեր մարմնի կշիռը նկատելիորեն փոքր է նույն ծավալով խիտ աղի ջրի կշռից, և հետևաբար՝ մարդը Մեռյալ ծովում, ըստ լողալու օրենքի, ջրի երեսն է դուրս գալիս այնպես, ինչպես հավի ծուն է աղի ջրի երեսը դուրս գալիս (իսկ խմելու ջրի մեջ սուզվում է):

ՆՇԱՆԱՎՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ ԿՅՈՒՆԻՑ



Հռչակավոր փիլիսոփա Պյութագորասին աշակերտում էր Էվաթլոսը: Ուսման վարձի կեսը նա վճարում է ամսիցապես, իսկ երկրորդ կեսը նա խոստանում է վճարել առաջին դատական գործը շահելուց հետո: Էվաթլոսը ավարտում է ուսումը: Ամենուր էին ամիսներ, նա չէր մասնակցում դատական գործերին, և պարտքը մնում էր վճարված: Պյութագորասը վճռեց դատարանի միջոցով ստանալ պարտքը: Սակայն միևնույն աղի նա դիմում է Էվաթլոսին.

- Եթե դու շահես դատը, ապա պետք է վճարես պարտքդ՝ համաձայն մեր պայմանի, իսկ եթե տանուլ տաս, ապա պետք է վճարես համաձայն դատարանի որոշման: Պարզ է, որ դու կշահես կամ տանուլ կտաս դատը, ուրեմն, միևնույն է, վճարելու ես ինձ հասանելիք գումարը:

Այս հիմնավորումը Էվաթլոսին չի համոզում: Չէ՞ որ նա եղել է Պյութագորասի լավագույն աշակերտը: Եվ նա պատասխանում է.

- Եթե ես շահեմ դատը, ապա չպետք է վճարեմ Ձեզ՝ համաձայն դատարանի որոշման, իսկ եթե տանուլ տամ, ապա չպետք է վճարեմ՝ համաձայն մեր պայմանի: Այսպիսով, ես շահեմ, թե տանուլ տամ, ոչ մի դեպքում չպետք է վճարեմ Ձեր պահանջած գումարը:

Իր պատանեկան տարիներին իտալացի մեծ նկարիչ Ռաֆայելն ապրել է հյուրանոցում: Նա չէր զլանում ծախսեր անելուց: Եվ ահա պարտքերի գումարը բավականաչափ մեծանում է, իսկ նա փող չի ունենում: Հյուրանոցի տերը զայրանում է, պահանջում է վճարել հաշիվը: Այդժան Ռաֆայելը հայտարարում է, որ ինքը շուտով կմեկնի: Երկու-երեք օր հետո նա տիրոջը հայտնում է, որ մեկնում է:

- Իսկ փողե՞րը,- հարցնում է տերը:
- Ահա այնտեղ են,- պատասխանում է Ռաֆայելը՝ ցույց տալով սեղանի կենտրոնում ընկած ոսկե և արծաթե դրամների կույտը: Ապա շտապ վերցնելով ձեռնաձեռնոցը՝ նա դուրս է գալիս հյուրանոցից: Հյուրանոցի տերը, ցանկանալով դրամը հավաքել և լցնել գրպանը, մեկնում է ձեռքը, սակայն ձեռքը պլստում է սեղանի վրայից: Դրամը նկարված էր:

Արվեստի մի ինչ-որ սիրող, տեսնելով այդ սեղանը, տիրոջից գնում է մի գումարով, որը հեշտությամբ ծածկում է տիրոջ ծախսերը:

Առաջին վարձու աշխատողը, որ պահանջել է վճարել լրացուցիչ աշխատած ժամերի դիմաց և հասել է իր ուզածին, եղել է Վերածննդի դարաշրջանի իտալացի խոշոր նկարիչ Միքելանջելոն: «Ահեղ դատաստան» որմնանկարն ստեղծելիս Հռոմի սիքստինյան կապելլայի առաստաղը նկարագրողելու ժամանակ նա Պավել 3-րդ պապի հետ կայացրել է համաձայնություն այն մասին, որ ցերեկը՝ մինչև արևի մայրամուտը, աշխատանքի դիմաց պետք է վճարվի մեկ դուկատ, իսկ մայրամուտից հետո՝ երկու դուկատ:

Հանձնարել վարպետը պատրաստել էր հատուկ լապտեր, որ ամրացնում էր գլխին: Այսպիսով, նրա ձեռքերն ազատ էին, և նա կարող էր աշխատել նաև արևամուտից հետո: Իսկ դա եղել է 1536 թվականին:

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Վ.ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
Խմբագիր՝ Ա.ՍԱՀԱԿՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղդամյան 24/4, հեռ. 58-18-23, 3-16

Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:

Ստորագրված է տպագրության՝ 25.10.2024 թ.:

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ տպարանում: